Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի, յայտ առնելով զսա-
ռանալոնս իւր և զվանդ Աթոռոյն և սեփհական ժառան-
գութեանց ազգին յերեսաց ատելութեան Ցունաց։ Ապա
խնդրեցին ձեռնտու և օգնական լինիլ Նուիրակացն Երու-
սաղէմի Հայրապետական կոնդակաւ յորդորելով զբարե-
պաշտ ժողովուրդն։ Եհաս անդ և Ստեփաննոս վարդապետ
Նուիրակն Կարնոյ, և պատմեաց նմա զամենայն հանգա-
մանս Աթոռոյն։ Եւ յետ այնորիկ ձեռնադրեաց զնա յաս-
տիճան Եպիսկոպոսութեան յաւուր Ծննդեան Տեառն մե-
րոյ եւ գրեաց կոնդակ յորդորական բանիւք առ ժողո-
վուրդս Կարնոյ, Կարսայ և Պայէզիտայ վիճակացն, օգնա-
կան լինել առատաձեռն ողորմութեամբ Աթոռոյն Երու-
սաղէմի 'ի սէր մարդացելոյ Փրկչին՝ յաղատութիւն Տնո-
րինական Տեղեաց և սեփհական ժառանգութեանց ազգին,
և 'ի թեթեւութիւն ծանր պարտուց, ուր յետոյ յաւելու
ասել « Ստուգութեամբ ասեմ և ոչ ստեմ. զի եթէ ոչ էր
Ս. Աթոռս 'ի տարաբաղդ վիճակի՝ որպէս և գիտէք, մեք
եւս յօժար էաք ամենայն կարողութեամբ մերով արդիւ-
նամատոյց լինիլ յաղագս այցելութեան Ս. Յակոբայ հրա-
շալի Աթոռոյն » · (1811· 'ի 20 Ցունվարի)։

Գրեաց նաեւ գիր օրհնութեան առ ամենայն ազգն
Հայոց, որք բնակեալ էին 'ի սահմանս Օսմանեան պետու-
թեան մանաւանդ 'ի Կոստանդինուպոլիս, եւ առաքեաց
'ի ձեռն Գրիգորի եպիսկոպոսի · և նորա հասեալ 'ի Կարին՝
արգելաւ անդ՝ զի դլխաւորք ազգին գրեցին առ նա չմը-
տանել 'ի թադաւորական քաղաքն, զի յեկեղեցիս տակա-
ւին ոչ յիշէին զանուն Եփրեմի, այլ նախորդի նորին սակս
պատերազմին Օսմանցւոց ընդ Ռուսս։

Իսկ Թէոդորոս Պատրիարք խնդրեաց 'ի դատաւորէն
Երուսաղէմի տալ Իլամ վասն այլայլութեան ձեւոյն Սուրբ
Յարութեան, այլ նա ոչ կամեցաւ, զի յառաջագոյն գաղտ-
նի 'ի Հայոց և 'ի Լատինաց՝ և գիտութեամբ քանի մի այ-
լազգեաց, որք էին 'ի ստորին կարգէ, տուեալ էր Իլամ
Ցունաց, թէ շինուածքն ոչ են հակառակ առաջին դրից։
Այլ փոխանակ այնր ետ երիս Իլամս ծանր ծախիւք, մին
վասն Ս. Յարութեան, զի խափանեցին Ցոյնք զզարդս և
զարարողութիւնս Հայոց · երկրորդ՝ վասն դերեզմանի սուրբ